21-ՐԴ ՆԻՍՏ

24 սեպտեմբերի, երեկոյան ժամը 7, 1918թ.

Օրակարգի հարցերն են՝

1. Գաղթականական խնամատարության օրենսգծի վերջնական խմբագրության հաստատումը.
2. Դիլիջանում գանձարան բաց անելու օրենսգծի վերջնական խմբագրության հաստատումը.
3. Քրեական դատավարության մի քանի կետերի փոփոխության օրենսգծի երրորդ ընթերցումը.
4. Դպրոցական դիրեկցիայի վերացման օրենսգծի 3-րդ ընթերցումը.
5. Օրենքներ հրատարակելու օրենսգծի 3-րդ ընթերցումը.
6. Ոգելից խմիչքների և գինու վրա ակցիզ ավելացնելու օրենսգծի առաջին ընթերցումը.
7. Ջուլիակային աշխատանքի օրենսգծի առաջին ընթերցումը.
8. Չեկուցում պետական վերահսկողության օրենսգծի մասին.
9. Բժշկա-սանիտարական հանձնաժողովի զեկուցում.
10. Ընթացիկ գործեր:

Նախագահը հայտարարում է նիստը բացված. նիստի սկզբում տեղի է ունենում քրեական դատավարության մի քանի կետերի փոփոխության, դպրոցական դիրեկցիայի վերացման և օրենքներ պահելու ու հրատարակելու օրենսգծերի երրորդ ընթերցումը. այդ օրենսգծերը առանձին-առանձին կարդացվում, քվեարկվում և ընդունվում են խորհրդի կողմից: Ապա *պատգ. Ռ. Տեր-Մինասյանը* կարդում է գաղթականական խնամատարության օրենսգիծը վերջին խմբագրությամբ. դաշնակցական ֆրակցիայի կողմից առարկություն է լինում օրենսգծի 3-րդ և 4-րդ հոդվածների դեմ. ֆինանսական հանձնաժողովի կողմից պատգ. Սիր. Տեր-Մարտիրոսյանը հայտնում է հանձնաժողովի ունեցած տեսակետը այդ խնդրի մասին, որից պարզվում է, որ նոքա գտնում են, [թե] մոնոպոլիայի միջոցով հավաքված բամբակից 85.800 փութ պետք է հատկացնել ջուլիականոցին և որ այդ գործարանի կառավարչի տրամադրության տակ պետք է դնել 5 միլիոն ռուբլի:

Ֆինանսների. մինիստրը հայտարարում է, որ ինքը հնարավորություն չէ ունեցել սկզբից ծանոթանալու այդ գործին, բայց լսած զեկուցման վրա հիմնվելով, գտնում է, որ այդ օրենսգիծը պետական բյուջեի ձև չի կրում, իսկ եթե ինքնուրույն հիմնարկության ձև պետք է կրի այդ գործարանը, այն ժամանակ օրենսգիծը այլ կերպ պետք է կազմվեր. իսկ այժմ ստացվել է մի ուրույն ձև, որն անընդունելի է: Պատգ. *Ս. Տիգրանյանը* առաջարկում է օրինագիծը հանձնել ֆինանսական կոմիսիային, որպեսզի մինիստրի հետ միասին խառը ժողովում քննելուց հետո նոր միայն խորհրդին ներկայացվի: Պատգ. *Տեր-Մինասյանը* հայտարարում է, որ երբ օրինագծի դեմ առարկում են, պետք է նոր օրինագիծ առաջարկել:

Այնուհետև անցնելով խնդրի շտապողականությանը՝ շեշտում է, որ գաղթականությանը, այսպես թե այնպես, պետք է մի որևէ կերպ նպաստ տալ. դրամական նպաստ տալ մոտավորապես 20.000 կանանց ավելի հեշտ չէ, քան նրանց համար գործ գտնել: Ապա ավելացնում է, որ սա արդեն օրինագծի 3-րդ ընթերցումն է և որ ջուլիականոցին վերաբերող հոդվածը օրինագծի մի մասն է կազմում միայն, ուստի և առարկություններն ավելորդ են:

Ֆինանսների մինիստրը հայտարարում է, որ իրեն տարօրինակ է թվում և որ ոչ մի երկրում ընդունակ ձև չէ, որ պետական որևէ հանձնաժողով պահանջե 6 միլիոն բյուջե և ֆինանսների մինիստրը տեղյակ չլինի: Ավելացնում է, որ ինքը օրինագծի մասին ըստ էության չի խոսել: Առաջարկում է կամ փոխել այդ կետը, կամ վերացնել:

Քվեարկության է դրվում հետևյալ առաջարկը. «Վերադարձնել օրինագիծը ֆինանսական հանձնաժողովին՝ վերաքննելու համար», որը և ընդունվում է խորհրդի կողմից:

Պատգամավոր Ռ. Տեր-Մինասյանը կարդում է «Գաղթական որբերի խնամատարության մասին» եղած օրինագիծը. խորհուրդը գտնում է, որ օրինագիծը անկանոն ձևով է կազմված. էսեռների ֆրակցիան պնդում է այդ և առաջարկում է օրինագիծը հանձնել օրենսդրական կոմիսիային՝ վերամշակելու և վերջնականորեն կազմելու:

Էսեռների առաջարկը քվեարկության է դրվում և ընդունվում է խորհրդի կողմից:

Պատգ. Ս. Տեր-Մարտիրոսյանը զեկուցում է ոգելից խմիչքների և գինու վրա ակցիզ ավելացնելու օրինագիծը. զեկուցողը իր և հանձնաժողովի կողմից պաշտպանում է խնդրի շտապողականությունը, որովհետև շատերը իրենց ունեցած սպիրտն ու գինին ծախում են. օրինագծի շտապողականությունը ճանաչվում է: Այնուհետև պատգամավորը, որը հայտնում է, որ հանձնաժողովը օրինագիծը կազմելու ժամանակ կանգ է առել հետևյալ հարցերի վրա, թե ակցիզն ավելացնելու դեպքում, արդյո՞ք՝ 1) գինեգործությունը չի դադարիլ, 2) կոնտրաբանդան չի զարգանալ և 3) արտահանություն չի սկսվիլ. հանձնաժողովը այս հարցերը քննելուց հետո հանգել է այն եզրակացության, որ ակցիզը բարձրացնելու դեպքում՝ ոչ մի վնաս գինեգործության համար չի կարող առաջանալ: Ապա կարդացվում է օրինագիծը:

Ֆինանսների մինիստրը հայտարարում է, որ սպիրտի այն քանակը, որը ժամանակի ընթացքում ցնդում է, ազատվում է տուրքից. եղած տեղեկություններից երևում է, որ ցնդող սպիրտի քանակը հասնում է 7%-ի: Մեր տերիտորիայի վրա ստացվում է տարեկան մոտ $2^1/_2$ միլիոն գրադուս սպիրտ*, բայց ծախվում է մինչև 60 գրադուս**, դրա հետևանքը լինում է այն, որ սպիրտը մնալով ցնդում է: Երկրորդ խնդիրը գինու խնդիրն է, եթե գինու վրա մեծ տուրք նշանակվի, այն ժամանակ գինետերերը այլևս գինի չեն պատրաստիլ, այլ կոնյակ և սպիրտ կպատրաստեն, որովհետև միայն այդ նրանց ձեռնտու կլինի, դրա համար էլ պետք է գինու վրա մեծ ակցիզ չնշանակել:

Երրորդ խնդիրը գինու առևտրի խնդիրն է, այդ առևտուրը նույնպես պետք է կոնտրոլի ենթարկել:

Պատգ. Ազատյան. «Աչքի առաջ ունենալով երկրի բացառիկ ֆինանսական պայմանները, ընդունում ենք այդ օրինագիծը, միայն որոշ փոփոխություններով: Երբ որ մենք ակցիզը ավելացնում ենք, սպիրտի կամ գինու տերը այդ հավելումը պետք է ժողովրդից դուրս բերի՝ թանկ գնով ծախելով ապրանքը, ուստի և առաջարկում ենք ֆրակցիայի կողմից այդ ապրանքների վրա գինը նշանակել»:

Պատգ. Հ. Մարգսյանը համաձայնում է պատգ. Ազատյանի առաջարկի հետ, շեշտելով, որ կոնյակի վրա բարձր ակցիզ դնել կարելի է, որովհետև հասարակության դեմոկրատիկ*** տարրը չի օգտվում կոնյակից, իսկ հարուստները թանկ գնով էլ կարող են գնել:

Ֆինանս. մինիստրը պատգ. Ազատյանի առաջարկը համարում է անիրագործելի, որովհետև նա սակագին է պահանջում, իսկ գինու և կոնյակի վրա սակագին նշանակելուց հետո պետք է բոլոր կենսամթերքների վրա ևս սակագին նշանակվի, որ անհատապես ինքը՝ ֆինանսների մինիստրը, գտնում է աննպատակահարմար. սակագնի հետևանքով գաղտնի առևտուր է զարգանում և գները շուկայում ավելի բարձրացնում:

Պատգ. Ազատյանը գտնում է, որ ֆինանս. պ. մինիստրի առարկությունը հակասում է նրա նախկին ասածներին. եթե սակագինը գաղտնի առևտուր է զարգացնում, մի՞թե ակցիզի բարձրացումն նույնը չի կարող անել. չէ՞ որ ակցիզն էլ նույն սակագինն է: Քվեարկության է դրվում օրինագիծը հոդված առ հոդված. բոլոր չորս հոդվածներն էլ ընդունվում են խորհրդի կողմից: Ապա քվեարկվում է ամբողջ օրինագիծը, որը նույնպես ընդունվում է:

---

* «Գրադուս» չափի միավորը հավասար էր 123 միլիլիտրի:-Ծանոթ. կազմ.:
** Փաստաթղթում այդպես է, պետք է լինի ավելի մեծ թիվ:-Ծանոթ. կազմ.:
*** Նկատի ունի աշխատավոր խավին:-Ծանոթ. կազմ.:

Հերթի է դրվում պետական վերահսկողության օրինագիծը. զեկուցում է պատգամավոր *Սիր. Տիգրանյանը.* նա հայտարարում է, որ խորհուրդը հանձնարարել էր դատաստանական հանձնաժողովին՝ մի հմուտ մարդ հրավիրել. այդ մարդը հրավիրված է և հանձնաժողովը նրա հետ մի նիստ է ունեցել պետական հաշվետեսի թեկնածուների խնդրի շուրջը:

Պատգ. Մամիկոնյանը գտնում է, որ պետության ծախքերը քննելիս ռուսական օրենքով առաջնորդվել հնարավոր չէ, որովհետև այդ օրենքի համաձայն պետական հաշվետեսը անում էր միայն այն, ինչ որ օրենքն էր նախատեսել. մեր երկրում, որտեղ ամեն քայլափոխում զեղծումներ են կատարվում, այդպես լինել չի կարող: Ապա պատգամավորը գտնում է, որ պետական կոնտրոլյորը պետք է լինի ոչ թե մի նեղ մասնագետ միայն, այլ այնպիսի մեկը, որը լայն ժողովրդականություն վայելելիս լինի:

Պատգ. Բուդաղյանը պնդում է, որ պետական հաշվետեսի շտատի մի մասը դրսից պետք է հրավիրել, իսկ ինքը՝ պետական հաշվետեսը, պետք է անպայման մասնագետ լինի:

Պատգ[ամավորը] պաշտպանում է հանձնաժողովի առաջարկը և գտնում խնդիրը շտապողական:

Պ*ատգ. Ս. Տիգրանյան.* «Մենք պետք է մի ապարատ ստեղծենք՝ անմիջապես գտնելու պետական զեղծումները»: Ասում է պատգամավորը և առաջարկում ընդունել օրինագծի շտապողականությունն ու հանձնել կոմիսիային: *Պատգ. Մամիկոնյանը* գտնում է, որ կոմիսիան եկել է խնդրելու, որ իրեն իրավունք տան ընտրելու պետական հաշվետեսին, բայց խորհուրդը չպետք է հրաժարվի իր իրավունքներից. նա ինքը պետք է ընտրի պետության բոլոր հաշիվները քննող բարձր պաշտոնյային: Այնուհետև ֆրակցիաները անում են իրենց առաջարկները պետական հաշվետեսի ընտրության մասին:

Այդ առաջարկները քվեարկության են դրվում: Հանձնաժողովի առաջարկը խորհուրդը չի ընդունում: Անցնում է սոց.-դեմոկրատների հետևյալ առաջարկը. «Հանձնարարել խորհրդի նախագահությանը՝ հետևյալ նիստին ներկայացնել պետական հաշվետեսի թեկնածուների ցուցակը ընտրություն կատարելու համար»:

Նիստի վերջում սոց-դեմոկրատները մի քանի հարցումներ են անում ներքին գործոց պ. մինիստրին և պ. մինիստր նախագահին: Ներքին գործոց պ. մինիստրի բացակայության պատճառով նրան ուղղված հարցումները մնում են բաց: *Պ. մինիստր նախագահը* իրեն ուղղված հարցումներին պատասխանելով, հայտնում է, որ լուսավորության մինիստրը առայժմ չի հրավիրված միայն այն պատճառով, որ դպրոցական օրենքի մեջ կան մի քանի մութ կետեր, որոնք պարզաբանված չեն. այդ հարցերի լուծման դեպքում լուսավորության մինիստրը իսկույն կհրավիրվի. ապա հայտնում է, որ դպրոցների բացումը կախում չունի լուս. մինիստրից և որ դպրոցները կբացվեն հոկտեմբերի մեկից: Վերջում *պատգ. Մուշեղյանը* Տփխիսի պոլիտեխնիկումի մասին հայտարարություն է անում: Ժամանակի ուշ լինելու պատճառով այդ հայտարարություն-հարցումի պատասխանը թողնվում է հաջորդ նիստին: Նախագահը նիստը հայտարարում է փակված:

«Կառավարության լրաբեր», 4 հոկտեմբերի 1918թ.